

Որակի հռչակագիր Օդային տրանսպորտ

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Օդային տրանսպորտ
0.2	Ոլորտը	Տրանսպորտ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Ներսիսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 582949 Էլ. փոստ՝ anahit_nersisyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն օդային տրանսպորտի արտադրանքի մասին, այդ թվում՝</p> <p>-(առաքվել են բեռներ և փոստ, ներկրվել են բեռներ և փոստ, մեկնել են ուղևորներ, ժամանել են ուղևորներ, ինքնաթիռների կանոնավոր և չարտերային չվերթների քանակը, կատարված ինքնաթիռակիլոմետրերը, թռիչքաժամերը, փաստացի և սահմանային բեռնաշրջանառությունները և ուղևորաշրջանառությունները),</p> <p>-(առաքվել են բեռներ և փոստ, ներկրվել են բեռներ և փոստ, մեկնել են ուղևորներ, ժամանել են ուղևորներ, ինքնաթիռների կանոնավոր և չարտերային չվերթների քանակը, կատարված ինքնաթիռակիլոմետրերը, թռիչքաժամերը, փաստացի և սահմանային բեռնաշրջանառությունները և ուղևորաշրջանառությունները),</p> <p>-(ուղևորների, բեռների փոխադրումներից ստացված հասույթը բոլոր տեսակի հաղորդակցություններով, ուղևորների և բեռների փոխադրումների հետ կապված ծախսերը, անձնակազմով օդային, մարդատար և բեռնատար տրանսպորտի վարձակալության ծառայություններից ստացված հասույթը, փոխադրված ուղևորների և բեռների (ուղեբեռ, բեռ, փոստ) քանակը բոլոր տեսակի հաղորդակցություններով, ավիացիոն վառելիքի փաստացի ծախսը, ուղևորատարողությունների օգտագործման գործակիցը և առևտրային բեռնվածքի օգտագործման գործակիցը),</p> <p>- (ինքնաթիռների (ուղղաթիռների) տեսակները, օրացուցային ժամանակը-ընդամենը, այդ թվում՝ սարքին, որից ուղերթում, ռեգերվում, պարապուրդում և չկատարված թռիչքներ,</p> <p>-օրացուցային ժամանակը-ընդամենը, այդ թվում՝ անսարք, որից</p>

		<p>տեխնիկական սպասարկման մեջ, վերանորոգման մեջ, պահեստամասերի բացակայության պատճառով և ենթակա են դուրս գրման: Ինքնաթիռների հավաքատեղի մաշվածությունը),</p> <p>-(ինքնաթիռների, ուղղաթիռների) չվերթների չվացուցակի կատարման մասին, ինչպես նաև չվացուցակով նախատեսված չվերթների քանակի, փաստացի մեկնած ինքնաթիռների և ժամանած ինքնաթիռների քանակի, այդ թվում՝ ուշացումով, որից եղանակի պատճառով, վառելիքի պատճառով և այլ պատճառներով:</p> <p>Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 40-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:</p>
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Օդային տրանսպորտի արտադրանքի ցուցանիշները կիրառվում են տրանսպորտի բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլն պատասխաններով:</p>
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից ամսական, և տարեկան պարբերականությամբ հավաքվող տվյալներն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության	Օդային տրանսպորտի գործունեությունը բնութագրվում է բեռների

	<p>նկարագիրը</p>	<p>(ուղեբեռ, բեռ ու փոստ) և ուղևորների փոխադրումներով, դրանց դիմաց ստացված հասույթով, բեռնաուղևորաշրջանառությամբ, շահագործվող շարժակազմի քանակով, դրանց տեխնիկական վիճակով և այլն:</p> <p>Առանձնացվում է օդային տրանսպորտով կանոնավոր և ոչ կանոնավոր փոխադրումներ:</p> <p>Օդային տրանսպորտով կանոնավոր փոխադրումները պլանավորված չվացուցակով կատարված չվերթներն են բեռնվածությամբ պայմանավորված լրացուցիչ չվերթները):</p> <p>Օդային տրանսպորտով ոչ կանոնավոր փոխադրումները՝ պայմանագրային հիմունքներով կատարված առևտրային չվերթներն են:</p>
<p>1.2</p>	<p>Վիճակագրական հասկացություններ</p>	<p><i>Հիմնական հասկացություններ</i></p> <p>Առաքվել են բեռներ և փոստ, ներկրվել են բեռներ և փոստ ցուցանիշներում ներառվում են հանրապետությունից առաքված և հանրապետություն ներկրված բեռները (ներառյալ այլ պետությունների ինքնաթիռներով փոխադրված բեռների և փոստի քանակը), արտահայտված տոննաներով:</p> <p>Մեկնել են ուղևորներ ցուցանիշը իրենից ներկայացնում է հանրապետությունից մեկնած ուղևորների թվաքանակը (ներառյալ այլ պետությունների ինքնաթիռներով մեկնած ուղևորները):</p> <p>Ժամանել են ուղևորներ ցուցանիշը իրենից ներկայացնում է հանրապետություն ժամանած ուղևորների թվաքանակը (ներառյալ այլ պետությունների ինքնաթիռներով ժամանած ուղևորները):</p> <p>Հայաստանյան շարժակազմով ցուցանիշում ներառվում են միայն Հայաստանի Հանրապետության ինքնաթիռներով առաքված և ներկրված բեռների և փոստի քանակները, մեկնած և ժամանած ուղևորների թվաքանակները:</p> <p>Բեռնաշրջանառությունը որոշվում է հայաստանյան շարժակազմով յուրաքանչյուր չվերթով փոխադրված բեռների քանակի և համապատասխան շահագործական հեռավորության արտադրյալների հանրագումարով:</p> <p>Ուղևորաշրջանառությունը որոշվում է հայաստանյան շարժակազմով յուրաքանչյուր չվերթով փոխադրված ուղևորների թվաքանակի և համապատասխան շահագործական հեռավորության արտադրյալների հանրագումարով:</p> <p>Ավիափոխադրումների ընդհանուր ծավալը որոշվում է</p>

		<p>հայաստանյան շարժակազմով յուրաքանչյուր չվերթով փոխադրված բեռների, ուղեբեռների ծավալի, ուղևորների թվաքանակի (վերածած կգ-ի՝ 1 ուղևորը - 90 կգ) և համապատասխան շահագործական հեռավորության արտադրյալների հանրագումարով:</p> <p>Բեռնափոխադրումներից ստացված հասույթն իրենից ներկայացնում է բեռնափոխադրումներից գոյացած գումարը՝ դրամական արտահայտությամբ առանց ավելացված արժեքի հարկի:</p> <p>Ուղևորափոխադրումներից ստացված հասույթն իրենից ներկայացնում է վաճառված տոմսերից գոյացած գումարը՝ դրամական արտահայտությամբ առանց ավելացված արժեքի հարկի:</p> <p>Օժանդակ և լրացուցիչ օդային տրանսպորտի գործունեությունից ստացված հասույթը (<i>առանց ավելացված արժեքի հարկի</i>) ներառում է՝ ուղեբեռի գրանցման և ընդունման, ուղևորների օդանավերին (օդանավերից) տեղ հասցնելու, տեղերի ամրագրման, հանձնված տոմսերի ընդունման և վճարների վերադարձման, ռադարային կայանների, տեղեկատու բյուրոների, սպասարանների, մոր և մանկան սենյակների տրամադրման, բեռների փոխադրմանը վերաբերող տրանսպորտային գործակալների միջնորդական ծառայություններից, ինչպես նաև տոմսերի վաճառքի միջնորդավճարների գումարները և այլն:</p> <p>Կատարված է ինքնաթիռա-կմ ցուցանիշը որոշվում է թռիչքների քանակի և համապատասխան շահագործական հեռավորության արտադրյալների հանրագումարով:</p> <p>Շահագործական հեռավորությունը տվյալ չվերթի կետերի միջև ընկած հեռավորությունն է:</p> <p>Ինքնաթիռների թռիչքների քանակը իրենից ներկայացնում է ինքնաթիռների մեկնումների և ժամանումների թվի հանրագումարը:</p> <p>Թռիչքաժամերի ցուցանիշը ցույց է տրվում ամբողջական թվերով և ներկայացնում է թռիչքը սկսելու պահից մինչև վայրէջքը ընկած ժամանակահատվածը:</p> <p>Փաստացի ուղևորաշրջանառություն ցուցանիշը իրենից ներկայացնում է յուրաքանչյուր չվերթի ընթացքում տեղափոխված ուղևորների փաստացի քանակի և այդ չվերթի համապատասխան շահագործական հեռավորության արտադրյալի հանրագումարը:</p> <p>Մահմանային ուղևորաշրջանառություն ցուցանիշը իրենից ներկայացնում է ուղևորների համար նախատեսված ինքնաթիռների բազկաթոռների քանակի և տվյալ ինքնաթիռի թռիչքի</p>
--	--	--

		<p>համապատասխան շահագործական հեռավորության արտադրյալի հանրագումարը:</p> <p>Փաստացի բեռնաշրջանառությունը որոշվում է յուրաքանչյուր չվերթով փոխադրված բեռների փաստացի քանակի և համապատասխան շահագործական հեռավորության արտադրյալների հանրագումարով:</p> <p>Փաստացի տոննա-կիլոմետրաժ ցուցանիշը իրենից ներկայացնում է տոննա կիլոմետրաժների հանրագումարն ըստ փոխադրումների և ինքնաթիռների տեսակների:</p> <p>Ուղևորատար տոննա-կիլոմետրաժը ստացվում է ուղևոր- կիլոմետրը 0,09 գործակցով բազմապատկելու միջոցով:</p> <p>Սահմանային տոննա-կիլոմետրաժ ցուցանիշը իրենից ներկայացնում է յուրաքանչյուր ինքնաթիռի սահմանային բեռնման (բեռնատարողության) և համապատասխան շահագործական հեռավորության արտադրյալների հանրագումարը:</p> <p>Չվացուցակով նախատեսված չվերթների քանակը իրենից ներկայացնում է չվացուցակով նախատեսված կանոնավոր չվերթների քանակը:</p> <p>Փաստացի մեկնած ինքնաթիռների քանակը իրենից ներկայացնում է հանրապետությունից փաստացի մեկնած ինքնաթիռների (ներառյալ ոչ կանոնավոր չվերթները) քանակը:</p> <p>Ժամանած ինքնաթիռների և ուղղաթիռների քանակն ըստ չվացուցակի ցուցանիշն իրենից ներկայացնում է ժամանած ինքնաթիռների և ուղղաթիռների քանակն ըստ չվացուցակի:</p> <p>Փաստացի ժամանած ինքնաթիռների և ուղղաթիռների քանակ ըստ չվացուցակի ցուցանիշը՝ փաստացի ժամանած ինքնաթիռների և ուղղաթիռների քանակն է:</p> <p><i>Ճյուղային ընդգրկունություն</i></p> <p>Օդային տրանսպորտի վիճակագրական դիտարկումները ներառում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ փոխադրումներ և պահեստային տնտեսություն (բաժին H), որտեղ ներառվում է օդային ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները, օդային ուղևորափոխադրումներ կանոնավոր չվերթներով (հաստատված երթուղիներով, համաձայն չվացուցակի), ոչ կանոնավոր (չարտերային) չվերթներով, զբոսաշրջության կամ հետազոտական նպատակներով իրականացվող չվերթներ: Ներառվում է նաև ուղևորափոխադրող</p>
--	--	--

		<p>օդային տրանսպորտի հանձնումը վարձակալության անձնակազմով, ընդհանուր օդագնացական ծառայությունները, օրինակ՝ ավիաակումբների կողմից ուսումնական կամ այլ նպատակներով կազմակերպվող թռիչքներ:</p> <p>Բացառում է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի մշակումը օդանավերից, օդանավերի ու դրանց շարժիչների հիմնական նորոգումը, օդային գովազդային ծառայությունները, օդալուսանկարահանումը: Բացառում է նաև օդային տրանսպորտի հանձնումը վարձակալության առանց անձնակազմի:</p> <p>Այս հատվածում ներառվում է նաև օդային բեռնափոխադրումներ կանոնավոր չվերթներով (հաստատված երթուղիներով, համաձայն չվացուցակի), ոչ կանոնավոր (չարտերային) չվերթներով, փոստի օդային փոխադրում կանոնավոր և ոչ կանոնավոր չվերթներով, բեռնատար օդային տրանսպորտի հանձնումը վարձակալության անձնակազմով:</p> <p>Այս բաժինը ներառում է նաև օդային տրանսպորտի օժանդակ գործունեությունը՝ օդային տրանսպորտով ուղևորների, կենդանիների և բեռների փոխադրման հետ կապված տերմինալների շահագործում, օդանավակայանների և օդային երթևեկության կառավարման, թռիչքադաշտի և այլ սպասարկման ծառայություններ, օդանավակայաններում հրդեհների մարման և կանխարգելման ծառայություններ: Ներառում է նաև ուղեբեռի գրանցման և ընդունման, ուղևորների օդանավերին (օդանավերից) տեղ հասցնելու, տեղերի ամրագրման, հանձնված տոմսերի ընդունման և վճարների վերադարձման, ռադարային կայանների, տեղեկատու բյուրոների, սպասարանների, մոր և մանկան սենյակների տրամադրման, բեռների փոխադրմանը վերաբերող տրանսպորտային գործակալների միջնորդական ծառայությունները և այլն:</p> <p>Բացառում է օդաչուական դպրոցների գործունեությունը:</p> <p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունը՝ օդային տրանսպորտի ցուցանիշներն ըստ մարզերի և Երևան քաղաքի չեն հավաքվում:</p> <p><i>Հրապարակման խմբավորումներ</i></p> <p>Տվյալները հրապարակվում են ըստ հաղորդակցության տեսակների: Տվյալները հրապարակվում են նաև աշխատողների թվաքանակով</p>
--	--	---

		որոշվող չափերի՝ գերփոքր (մինչև 9 մարդ), փոքր (10-49 մարդ), միջին (50-249 մարդ) և խոշոր (250 և ավել մարդ):
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական յուրաժամանակ (օպերատիվ) տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական, տարեկան
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Տեղեկատվությունը տրամադրվում է օդային տրանսպորտի վերաբերյալ վարչական վիճակագրություն վարող մարմնի ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից: Վերջինիս կողմից տվյալները հավաքվում են թվով 5 տնտեսվարող սուբյեկտից՝ ամսական և տարեկան պարբերականությամբ:
3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուրներ առկա չեն: Սահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Պատասխանների մակարդակը կազմում է 100%:
4. Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված Եվրոպական համայնքների վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE, հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա չէ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև	Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:

	փոխկապվածությունը	Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5. Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Ամսական հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն)</p> <p>Տարեկան հրապարակումներ</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:</p> <p>Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար.</p> <p>ա/ իրավաբանական անձի ծածկագիրը</p> <p>բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),</p> <p>գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը,</p> <p>դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը,</p> <p>զ/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն,</p> <p>է/ գործունեության հիմնական տեսակը,</p> <p>ը/ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված զուտ հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի),</p>

		<p>թ/ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը: Անհատ ձեռնարկատերերի համար. ա/ անունը, ազգանունը, բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ պետական գրանցման ամսաթիվը, ե/ բնակության վայրը, զ/ պետական գրանցման վայրը (եթե չի համընկնում բնակության վայրի հետ), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն, է/ գործունեության հիմնական տեսակը, ը/ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված զուտ հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի), թ/ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը:</p>
5.3	Այլ տեղեկատվություն	<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Օդային տրանսպորտի արտադրանքի հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019 թ. մայիսի 24-ի թիվ 32-Ն որոշումով ««Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» Ձև 65-ավիա (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումը հաստատելու մասին» հաստատված հավելված 2-ում, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019 թ. մայիսի 24-ի թիվ 29-Ն որոշումով ««Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» Ձև 30-ՔԱ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումը հաստատելու մասին» հաստատված հավելված 2-ում,</p> <p>ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019 թ. մայիսի 24-ի թիվ 28-Ն որոշումով ««Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև 12-ՔԱ տարեկան վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումը հաստատելու մասին» հաստատված հավելված 2-ում,</p> <p>ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019 թ. մայիսի 24-ի թիվ 27-Ն որոշումով ««Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև 1-չարտեր տարեկան վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումը հաստատելու մասին» հաստատված հավելված 2-ում:</p> <p>ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019 թ. մայիսի 24-ի թիվ 30-Ն որոշում “Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին” /տարեկան/ վիճակագրական ամփոփ</p>

		<p>հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումը հաստատելու մասին» հաստատված հավելված 2-ում:</p> <p>Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում:</p>
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: